ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«29» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 130-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 09 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների մասով՝ ***Գառնի համայնքի ավագանին որոշում է***.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 29-ի՝ արտահերթ թիվ 09 նիստի հետևյալ օրակարգը՝

1. <<Գառնիի Աղբահանության և Կանաչապատման>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին,
2. <<Գառնիի Քարերի Սիմֆոնիա>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին,
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 239-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,
4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին,
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին,
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին,
7. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին,
8. Կոտայքի մարզի Գառնի համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ,
9. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին,
10. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին,

11. Հողամասն ուղղակի վաճառքով օտարման մասին,
12. Հողամասն ուղղակի վաճառքով օտարման մասին,
13. Հողամասն ուղղակի վաճառքով օտարման մասին,
14. Հողամասն ուղղակի վաճառքով օտարման մասին,
15. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին,
16. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին,
17. Ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման մասին,
18. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին,
19. Հոտայքի մարզի Գառնի համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու վերաբերյալ,
20. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին,
21. 2027 թվականի համար Գառնի համայնքի վարչական սահմաններում արոտօգտագործման համար տեղական վճար սահմանելու և դրույքաչափը հաստատելու մասին,
22. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին,
23. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու և ուղղակի վաճառքի ձևով օտարելու թույլտվություն տալու մասին,
24. Համայնքային սեփականություն համարվող գույքի քանդման թույլտվություն տալու մասին

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ-8	Ձեռնպահ-0	Դեմ-0
1	ԱԼՈՅԱՆ ԱԼԻԿ			
2	ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ			
3	ԽԱԶԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ			
4	ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ			
5	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ			
6	ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ			
7	ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ			
8	ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«29» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 131-Ա

<<ԳԱՌՆԻԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ, 28-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի ***համայնքի ավագանին որոշում է***.

1. Ստեղծել «Գառնիի Աղբահանության և Կանաչապատման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Գառնիի Աղբահանության և Կանաչապատման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Առաջարկել Գառնի համայնքի ղեկավարին՝ «Գառնիի Աղբահանության և Կանաչապատման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ պետական հաշվառման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ-8	Ձեռնպահ-0	Դեմ-0
1	ԱԼՈՅԱՆ ԱԼԻԿ			
2	ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ			

3	ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ			
4	ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ			
5	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ			
6	ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ			
7	ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ			
8	ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ**

Բաղկացած է 4 էջից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ 1

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

ՀՀ Կոտայքի մարզի
Գառնի համայնքի ավագանու
2026 թվականի սեպտեմբերի 29-ի
N 131-Ա որոշմամբ

Համայնքի ղեկավար՝
Տ. Ոսկոյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Գառնի համայնքի ավագանու
2026 թվականի սեպտեմբերի 29-ին
N 131-Ա որոշման



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ» ՀԻՄՆԱՐԿԻ

ԳԱՌՆԻ 2026

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Գառնիի համայնքապետարանի «Աղբահանության և կանաչապատման» /այսուհետ՝ Հիմնարկ/ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որը սփեղծվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և սույն կանոնադրությամբ:

2. Հիմնարկի անվանումն է Գառնիի համայնքապետարանի «Աղբահանության և կանաչապատման» հիմնարկ:

3. Հիմնարկը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և հիմնարկի հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, գանձապետական հաշիվ: Իր նպատակների իրականացման, աշխատանքային գործունեության մեջ կիրառվող ձևերի և մեթոդների համապատասխան բովանդակության և ֆինանսատնտեսական գործունեության համար Հիմնարկը պատասխանատու է հիմնադրի առջև:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համագործակցում է այլ հիմնարկների և կազմակերպությունների հետ՝ համաձայնեցնելով Գառնիի համայնքապետարանի հետ:

5.Հիմնարկի իրավաբանական հասցեն է՝ գ.Գառնի, Ս. Շահումյան փողոց թիվ 4 1-ին հարկ:

2. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՒԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.1 Հիմնարկի գործունեության առարկա և հիմնական նպատակներ են հանդիսանում.

1. Համայնքի ճանապարհների հարթեցում, բարեկարգում,
2. Գառնի համայնքի վարչական տարածքի ճանապարհների մաքրում ձյան շերտից և մերկասառույցից:
3. Համայնքի սեփականություն հանդիսացող կոյուղու համակարգի սպասարկում և վերանորոգում:
4. Համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգի սպասարկում և վերանորոգում:
5. Եզրաքարերի վերանորոգում:
6. Անձրևաջրերի հեռացման ցանցի սպասարկում:
7. Սելավատարի սպասարկում:
8. Համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների սպասարկում /ընթացիկ նորոգում/ :
9.Համայնքի տարածքում ծառատունկի և ծառերի էփման աշխատանքների իրականացում
10. Համայնքի սեփականություն հանդիսացող այգիների, պուրակների, խաղահրապարակների և այլ տարածքների կանաչապատման, բարեկարգման:

1.2. Հիմնադիրը թույլ է տալիս Հիմնարկին իրականացնել համայնքային նշանակության ոչ տարանցիկ ճանապարհների սալապատման, խճապատման, երթևեկելի մասի և մայթերի բարեկարգման ձեռնարկատիրական գործունեությունը:

1.3. Հիմնարկում սահմանված է վեցօրյա աշխատանքային շաբաթ՝ սպասարկման անձնակազմի համար և հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ վարչական անձնակազմի համար՝ համաձայն ներքին կարգապահական կանոնների:

3. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

1.Հիմնարկի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը և նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հիմնարկի տնօրենը /այսուհետ՝ Տնօրեն/: Հիմնադրին է պատկանում Հիմնարկի կառավարման և նրա գործունեության վերաբերյալ ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

2. Հիմնարկի Հիմնադրի լիազորություններն են՝

1) Հիմնարկի կառուցվածքի սահմանումը,

2) Հիմնարկի գործունեության կազմակերպման կամ դադարեցման մասին որոշման ընդունումը,

3)Հիմնարկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների ու լրացումների կատարումը:

4) Իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

3. Հիմնադիրը Հիմնարկի գործունեության նկատմանբ վերահսկողություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով:

4. Հիմնարկի բարձրագույն ղեկավար պաշտոնատար անձը Հիմնարկի տնօրենն է, որի նկատմամբ կարգապահական տույժ է կիրառում, պաշտոնին նշանակում և պաշտոնից ազատում է Հիմնադիրը՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

5.Հիմնարկի Տնօրենը՝

1)կազմակերպում և ղեկավարում է Հիմնարկի աշխատանքները, ներկայացնում է Հիմնարկը պետական մարմիններում և այլ կազմակերպություններում, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,

2)պատասխանատվություն է կրում Հիմնարկի ամբողջ գործունեության, անհրաժեշտ պայմանների ստեղծման, կադրերի ճիշտ ընտրության, աշխատանքների արդյունավետ կազմակերպման, սանիտարահիգիենիկ վիճակի, կոլեկտիվում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծման համար,

3)Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ տնօրինում է Հիմնարկի գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները),

4)հաշվետու է Հիմնադրին,

5)աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Հիմնարկի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ

6)իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը

7)իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

6.Հիմնարկի աշխատակազմը պարտավոր է՝

1)աշխատանքները կատարել բարեխղճորեն և բավարարել համապատասխան աշխատանքների որակը,

2) կատարվող աշխատանքների ընթացքում պահպանել անվտանգության կանոնները:

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1.Հիմնարկի աշխատանքային գործունեության հիմնական ֆինանսական միջոցներ են համայնքապետարանի բյուջետային հատկացումները:

2.Հիմնարկի գույքը ձևավորվում է Հիմնադրի կողմից նրա փիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնված /ամրացված / գույքից, որը հաշվառվում է նրա հաշվեկշռում: Հիմնադիրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հետ վերցնել իր կողմից Հիմնարկին հանձնված գույքը:

3.Հիմնարկն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան օգտագործել, փիրապետել և տնօրինել իրեն հանձնված գույքը:

4.Հիմնարկը պատասխանատվություն է կրում իրեն ամրացված գույքի և միջոցների պահպանման և արդյունավետ օգտագործման համար:

5.Հիմնարկի լուծարման դեպքում նրան ամրացված գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

6. Հիմնարկի լրացուցիչ ֆինանսական աղբյուրներն են՝

-բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,

-Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրելի այլ գործունեությունից ստացված ֆինանսական և նյութական միջոցները:

7.Հիմնարկը սահմանված կարգով հաշվապահական հաշվառում կատարում է ինքնուրույն և հաշվետվություն է ներկայացնում համայնքապետարանի ֆինանսական բաժնին:

5. ՀԻՄՆԱՐԿԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1.Հիմնարկը լուծարվում կամ վերակազմակերպվում է Գառնի համայնքի ավագանու որոշումներով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հաստատում եմ
ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026Թ.
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 131-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ <<ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Աշխատակիցների թվաքանակը 36

ՀՀ	Պաշտոնի անվանումը	Պաշտոնների քանակը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)	Ընդամենը
1	Տնօրեն	1	330 000	330 000
2	Տնօրենի տեղակալ	1	300 000	300 000
3	Հաշվապահ	1	200 000	200 000
4	Գործավար-օպերատոր	1	185 000	185 000
5	Սպասարկման խմբի պատասխանատու (կանաչապատման և սան մաքրման)	1	200 000	200 000
6	Սպասարկման խմբի պատասխանատու (աղբահանության)	1	200 000	200 000
	Վարորդ (տրակտոր)	1	320 000	320 000
7	Վարորդ (տրակտոր)	1	300 000	300 000
8	Վարորդ (Բեռնատար-կամազ)	1	320 000	320 000
	Հրշեջ-փրկարար	4	160 000	640 000
	Հրշեջ-վարորդ	4	160 000	640 000
9	Վարորդ	3	165 000	495 000
	Ավտոմեխանիկ	1	198 000	198 000
10	բանվոր	8	181 500	1 452 000
11	Հարկահավաք	1	323 000	323 000
12	Հարկահավաք	1	231 000	231 000
13	Հավաքարար	5	181 500	907 500
14	Ընդամենը	36	3 955 000	7 241 500

Համայնքի ղեկավար S. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«29» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 132-Ա

<<ԳԱՌՆԻԻ ՔԱՐԵՐԻ ՍԻՄՖՈՆԻԱ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ, 28-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի **համայնքի ավագանին որոշում է.**

1. Ստեղծել «Գառնիի Քարերի Սիմֆոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Գառնիի Քարերի Սիմֆոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Առաջարկել Գառնի համայնքի ղեկավարին՝ «Գառնիի Քարերի Սիմֆոնիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ պետական հաշվառման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ-8	Ձեռնպահ-0	Դեմ-0
1	ԱԼՈՅԱՆ ԱԼԻԿ			
2	ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ			

3	ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ			
4	ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ			
5	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ			
6	ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ			
7	ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ			
8	ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Բաղկացած է 9 էջից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ 2

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

ՀՀ Կոտայքի մարզի
Գառնի համայնքի ավագանու
2026 թվականի սեպտեմբերի 29-ի
N 132-Ա որոշմամբ

Համայնքի ղեկավար՝
_____ Տ. Պողոսյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Գառնի համայնքի ավագանու
2026 թվականի սեպտեմբերի 29-ին
N 132-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

«ՔԱՐԵՐԻ ՍԻՄՖՈՆԻԱ» ՀԻՄՆԱՐԿԻ

ԳԱՌՆԻ
2026

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գառնի համայնքապետարանի «Քարերի սիմֆոնիա» հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ) իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որը ստեղծվում և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:
2. Հիմնարկի հիմնադիրը Գառնի համայնքն է՝ ի դեմս համայնքի ավագանու, որն օրենքով սահմանված կարգով իրականացնում է համայնքային կառավարչական հիմնարկի հիմնադրի գործառույթները:
3. Հիմնարկի անվանումն է՝ Գառնիի համայնքապետարանի «Քարերի սիմֆոնիա» հիմնարկ:
4. Հիմնարկը իր գործունեությունն իրականացնում է Գառնի համայնքի վարչական տարածքում՝ օրենքով և համայնքի ավագանու որոշումներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում:
5. Հիմնարկն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է օրինականության, արդյունավետության, թափանցիկության, հաշվետվողականության, շրջակա միջավայրի պահպանության, մշակութային և բնական ժառանգության նկատմամբ հարգանքի սկզբունքներով:
6. Հիմնարկը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք, ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով՝ գանձապետական և այլ հաշիվներ:
7. Հիմնարկը պատասխանատու է իր առջև դրված խնդիրների, իր կողմից իրականացվող աշխատանքների որակի, իրեն ամրացված գույքի պահպանության և արդյունավետ օգտագործման համար:
8. Հիմնարկը կարող է օրենքով սահմանված կարգով համագործակցել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական և համայնքային կազմակերպությունների, զբոսաշրջային, բնապահպանական, մշակութային, գիտական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ:
9. Հիմնարկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ Կոտայքի մարզ, Գառնի համայնք, գ. Գառնի, ձոր 1-ին փողոց թիվ 4/2:
10. Հիմնարկի գործունեության ժամերը, այցելուների սպասարկման ժամանակացույցը և աշխատանքային ռեժիմը սահմանվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը և համայնքի ղեկավարի կողմից հաստատված ներքին իրավական ակտերին համապատասխան:

2. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Հիմնարկի գործունեության հիմնական առարկան Գառնի համայնքի տարածքում գտնվող «Քարերի սիմֆոնիա» բնության հուշարձանի տարածքի՝ օրենքով սահմանված կարգով համայնքի լիազորությունների շրջանակում պահպանության, բարեկարգման, մաքրության, այցելուների սպասարկման և համապատասխան ենթակառուցվածքների պահպանման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումն է:
2. Հիմնարկի հիմնական նպատակներն են՝

1. «Քարերի սիմֆոնիա» բնության հուշարձանի տարածքի պատշաճ պահպանության և բարեկարգ վիճակի ապահովումը՝ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում,
2. այցելուների համար անվտանգ, մաքուր և պատշաճ պայմանների ապահովումը,
3. տարածքի մաքրության և սանիտարահիգիենիկ վիճակի պահպանումը,
4. տարածքի կանաչապատման և բարեկարգման աշխատանքների կազմակերպումը՝ բնության պահպանության պահանջներին համապատասխան,
5. այցելուների սպասարկման և տեղեկատվության տրամադրման կազմակերպումը,
6. տարածքում աղբահանության, սանիտարական մաքրման և անհրաժեշտ այլ աշխատանքների կազմակերպումը,
7. տարածքի բնական և զբոսաշրջային արժեքների նկատմամբ հանրության իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
8. զբոսաշրջության զարգացմանը նպաստող ծառայությունների կազմակերպումը՝ օրենքով թույլատրելի սահմաններում,
9. տարածքի այցելության ընթացքում անվտանգության և հասարակական կարգի պահպանմանն աջակցելը՝ համապատասխան իրավասու մարմինների հետ համագործակցությամբ,
10. համայնքի կողմից սահմանված վճարների և ծառայությունների կազմակերպմանն աջակցելը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
11. համայնքի սեփականություն հանդիսացող կամ Հիմնարկին ամրացված գույքի պահպանությունը և արդյունավետ օգտագործումը,
12. բնության հուշարձանի տարածքի նկատմամբ հոգատար վերաբերմունքի և շրջակա միջավայրի պահպանության մշակույթի ձևավորմանը նպաստելը:

3. Հիմնարկն իր գործունեությունն իրականացնելիս պարտավոր է պահպանել բնության հատուկ պահպանվող տարածքների և բնության հուշարձանների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:
4. Հիմնարկը չի կարող իրականացնել այնպիսի գործունեություն կամ տալ այնպիսի թույլտվություններ, որոնք օրենքով վերապահված են պետական կամ այլ իրավասու մարմինների լիազորությանը:

5. Հիմնարկը կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործունեություն՝ իր հիմնական նպատակներին համապատասխան:

3. ՀԻՄՆԱՐԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Հիմնարկի հիմնական գործառույթներն են՝
1. «Քարերի սիմֆոնիա» տարածքի մաքրության և բարեկարգության ապահովման աշխատանքների կազմակերպումը,
2. աղբահանության և աղբի հեռացման աշխատանքների կազմակերպումը,
3. աղբամանների, նստարանների, ցուցանակների և այլ բարեկարգման տարրերի պահպանության ու պատշաճ վիճակի ապահովումը,
4. հետիոտնային ուղիների, դիտակետերի և այցելուների համար նախատեսված տարածքների պատշաճ վիճակի պահպանումը՝ իրավասության սահմաններում,
5. տարածքում կանաչապատման և խնամքի աշխատանքների կազմակերպումը,
6. տարածքում տեղեկատվական ցուցանակների, ուղղորդող նշանների և այցելուներին անհրաժեշտ տեղեկատվության տեղադրման ու պահպանման կազմակերպումը,
7. այցելուների ընդունման և սպասարկման կազմակերպումը,
8. այցելուների համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը՝ տարածքի, այցելության կանոնների, անվտանգության պահանջների և պահպանության ռեժիմի վերաբերյալ,
9. տարածքում անցկացվող մշակութային, բնապահպանական, կրթական և զբոսաշրջային միջոցառումների կազմակերպմանը մասնակցելը,
10. տարածքի այցելությունների հաշվառման և համապատասխան վիճակագրական տվյալների հավաքագրման կազմակերպումը,
11. այցելուների առաջարկությունների և բողոքների ընդունման և սահմանված կարգով քննարկման կազմակերպումը,
12. տարածքում հայտնաբերված վնասվածքների, վթարների, վտանգավոր իրավիճակների կամ այլ խնդիրների վերաբերյալ համապատասխան մարմիններին տեղեկացնելը,
13. անհրաժեշտության դեպքում շտապ օգնության, փրկարարական, ոստիկանության և այլ իրավասու ծառայությունների հետ համագործակցելը,
14. համայնքի ղեկավարին և ավագանուն Հիմնարկի գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության և հաշվետվությունների ներկայացումը,
15. իրեն ամրացված գույքի հաշվառման, պահպանության և արդյունավետ օգտագործման ապահովումը,
16. օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացումը:

4. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

1. Հիմնարկի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի իրավական ակտերով սահմանված կարգով:
2. Հիմնարկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնարկի տնօրենը (այսուհետ՝ Տնօրեն):
3. Տնօրենին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարը:
4. Տնօրենը հաշվետու է համայնքի ղեկավարին և իր գործունեության վերաբերյալ սահմանված կարգով հաշվետվություն է ներկայացնում:
5. Տնօրենը՝

1. կազմակերպում և ղեկավարում է Հիմնարկի ընթացիկ գործունեությունը,
2. ներկայացնում է Հիմնարկը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում և այլ հաստատություններում՝ օրենքով սահմանված կարգով,
3. կազմակերպում է Հիմնարկի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացումը,
4. ապահովում է Հիմնարկի աշխատողների աշխատանքի կազմակերպումը,
5. աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Հիմնարկի աշխատողներին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով,
6. աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
7. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս պարտադիր կատարման ցուցումներ,
8. կազմակերպում է Հիմնարկի գույքի պահպանությունը և արդյունավետ օգտագործումը,
9. ապահովում է Հիմնարկի ֆինանսական և նյութական միջոցների նպատակային օգտագործումը,
10. կազմակերպում է այցելուների սպասարկման պատշաճ մակարդակի ապահովումը,
11. ապահովում է տարածքի մաքրության և բարեկարգության աշխատանքների իրականացումը,
12. անհրաժեշտության դեպքում համագործակցում է պետական, համայնքային և այլ իրավասու մարմինների հետ,
13. ապահովում է այցելուների անվտանգության վերաբերյալ սահմանված պահանջների պահպանումը՝ իր իրավասությունների շրջանակում,
14. համայնքի ղեկավարին ներկայացնում է Հիմնարկի գործունեության վերաբերյալ հաշվետվություններ,
15. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

6. Տնօրենի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է համայնքի ղեկավարի կողմից սահմանված պաշտոնատար անձը:

5. ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

1. Հիմնարկի աշխատակազմը ձևավորվում է Հիմնարկի առջև դրված խնդիրների և գործառույթների արդյունավետ իրականացման նպատակով:
2. Հիմնարկի աշխատողների թվաքանակը, պաշտոնների անվանումները և հաստիքացուցակը սահմանվում են օրենքով և համայնքի համապատասխան իրավական ակտերով սահմանված կարգով:
3. Հիմնարկի աշխատողները պարտավոր են՝

1. իրենց աշխատանքը կատարել բարեխղճորեն և պատասխանատվությամբ,
2. պահպանել աշխատանքային կարգապահությունը,
3. պահպանել անվտանգության, հակահրդեհային և սանիտարահիգիենիկ կանոնները,
4. այցելուների հետ վարվել քաղաքավարի և հարգալից,
5. պահպանել Հիմնարկի գույքը,
6. չխոչընդոտել այցելուների օրինական իրավունքների իրականացմանը,
7. պահպանել բնության և շրջակա միջավայրի պահպանության պահանջները,
8. իրենց իրավասության սահմաններում կանխել տարածքի աղտոտումը, գույքի վնասումը և այլ խախտումները,
9. անհապաղ տեղեկացնել Տնօրենին տարածքում առաջացած վտանգավոր իրավիճակների մասին:

4. Հիմնարկի աշխատողների աշխատանքային իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային պայմանագրերով, ներքին կարգապահական կանոններով և այլ իրավական ակտերով:

6. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՒՅՔԸ

1. Հիմնարկի գույքը ձևավորվում է համայնքի կողմից Հիմնարկին ամրացված, հանձնված կամ տրամադրված գույքից, ինչպես նաև օրենքով թույլատրելի այլ աղբյուրներից ձեռք բերված գույքից:
2. Հիմնարկին ամրացված գույքի սեփականատերը հանդիսանում է համայնքը, եթե օրենքով կամ համապատասխան իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:
3. Հիմնարկն իրավունք ունի իրեն ամրացված գույքը տիրապետել և օգտագործել սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Հիմնարկը պատասխանատվություն է կրում իրեն ամրացված գույքի պահպանության և արդյունավետ օգտագործման համար:

5. Հիմնարկը չի կարող իրեն ամրացված գույքը օտարել, գրավադրել կամ այլ կերպ տնօրինել, եթե դրա համար օրենքով սահմանված կարգով համապատասխան լիազորություն չունի:
6. Հիմնարկի գույքի հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Հիմնարկի գործունեության ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են՝
1. համայնքի բյուջեից հատկացվող միջոցները,
2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրելի այլ ֆինանսական միջոցները,
3. նպատակային հատկացումները,
4. դրամաշնորհները և նվիրատվությունները՝ օրենքով սահմանված կարգով,
5. Հիմնարկի կողմից օրենքով թույլատրված գործունեությունից ստացված միջոցները:
2. Հիմնարկի ֆինանսական միջոցներն օգտագործվում են բացառապես Հիմնարկի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:
3. Հիմնարկի ֆինանսական գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության բյուջետային և ֆինանսական օրենսդրության պահանջներին համապատասխան:
4. Հիմնարկը հաշվապահական հաշվառումը վարում և ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Հիմնարկի կողմից մատուցվող ծառայությունների համար վճարները, ինչպես նաև «Քարերի սիմֆոնիա» բնության հուշարձանի այցելության համար սահմանված վճարները կիրառվում են համայնքի ավագանու համապատասխան որոշումներով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
6. Հիմնարկը չի կարող ինքնուրույն սահմանել համայնքային վճարների կամ տեղական վճարների դրույքաչափեր, եթե այդ իրավասությունը օրենքով վերապահված չէ իրեն:

8. ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Հիմնարկն ապահովում է այցելուների սպասարկման կազմակերպումը՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները:
2. Այցելուների համար տեսանելի և հասանելի վայրերում կարող են տեղադրվել՝
1. տարածքի այցելության կանոնները,

2. անվտանգության կանոնները,
3. բնության պահպանության վերաբերյալ պահանջները,
4. այցելության ժամերը,
5. սահմանված վճարների վերաբերյալ տեղեկատվությունը,
6. արտակարգ իրավիճակների դեպքում անհրաժեշտ հեռախոսահամարները,
7. այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

3. Այցելուները պարտավոր են պահպանել տարածքի մաքրությունը, չվնասել բնական և բարեկարգման տարրերը, չաղտոտել շրջակա միջավայրը և պահպանել տարածքում սահմանված կանոնները:
4. Հիմնարկի աշխատողները կարող են այցելուներին իրազեկել տարածքի օգտագործման կանոնների և անվտանգության պահանջների մասին:
5. Տարածքում խախտումներ հայտնաբերելու դեպքում Հիմնարկը, իր իրավասության շրջանակում, ձեռնարկում է համապատասխան միջոցներ և անհրաժեշտության դեպքում տեղեկացնում է իրավասու մարմիններին:

9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հիմնարկի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. Հիմնարկը հաշվետու է համայնքի ղեկավարին, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ համայնքի ավագանուն:
3. Տնօրենը սահմանված կարգով ներկայացնում է Հիմնարկի գործունեության, ֆինանսական միջոցների օգտագործման, կատարված աշխատանքների և առկա խնդիրների վերաբերյալ հաշվետվություններ:
4. Հիմնարկը պարտավոր է ապահովել իր գործունեության թափանցիկությունը՝ օրենքով սահմանված սահմաններում:
5. Հիմնարկի գործունեության վերաբերյալ քաղաքացիների և կազմակերպությունների դիմումները, առաջարկությունները և բողոքները քննարկվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

1. Հիմնարկը վերակազմակերպվում կամ լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ:
2. Հիմնարկի լուծարման դեպքում պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո մնացած գույքի հետագա տնօրինումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ սահմանված կարգով:
3. Հիմնարկի լուծարման կամ վերակազմակերպման գործընթացն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությունն ուժի մեջ է մտնում այն հաստատելու մասին համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:
2. Սույն կանոնադրության փոփոխությունները և լրացումները կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն կանոնադրությամբ չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով:
4. Եթե սույն կանոնադրության որևէ դրույթ հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան դրույթները:
5. Հիմնարկի գործունեության արդյունավետությունն ապահովելու նպատակով կարող են ընդունվել ներքին իրավական և կազմակերպական փաստաթղթեր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

Հաստատում եմ
ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026Թ.
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 132-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ <<ՔԱՐԵՐԻ ՍԻՄՖՈՆԻԱ>>
ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Աշխատակիցների թվաքանակը 15

ՀՀ	Պաշտոնի անվանումը	Պաշտոնների քանակը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)	Ընդամենը
1	Տնօրեն	1	330 000	330 000
2	Տնօրենի տեղակալ	1	300 000	300 000
3	Հաշվապահ	1	200 000	200 000
4	Գործավար-օպերատոր	1	185 000	185 000
5	Էլեկտրիկ	1	208 000	208 000
6	Տոմսավաճառ	5	207 500	1 037 500
7	Տոմսերի հսկիչ	4	207 500	830 000
13	Հավաքարար	1	181 500	181 500
14	Ընդամենը	15	1 819 500	3 272 000

Համայնքի ղեկավար S. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«29» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 133-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 239-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1.Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 239-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ-8	Ձեռնպահ-0	Դեմ-0
1	ԱԼՈՅԱՆ ԱԼԻԿ			
2	ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ			
3	ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ			
4	ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ			
5	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ			
6	ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ			

7	ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ			
8	ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Կոտայքի մարզի Գառնի

Համայնքի ավագանու 29 Մեպտեմբեր 2026թ.

Հերթական նիստի թիվ 133-Ն որոշման

Գառնի համայնքի 2026թ-ի բյուջեի փոփոխություն և վերաբաշխում կատարելու վերաբերյալ

Հազար.դրամ

Տողի համարը	Բաժին	Խումբ	դաս	Բյուջետային եկամուտների և ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Հոդված	Ընդամենը	Փոփոխություն	Հաշված
ԾԱԽՍԵՐ								
2	6	3	1	Ջրամատակարարում	5113	64415.93	-18000.0	46415.93
2	1	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	5113	54378.463	-53000.0	1378.463
2	4	2	4	Ոռոգում	5113	48565.3	-19000.0	29565.3
2	4	5	1	Ճանապարհային տրանսպորտ	5113	87733.85	+90000.0	177733.85

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«29» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 134-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Վահան Հովհաննիսյանի դիմում խնդրանքը, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացիներ ***Վահան Հովհաննիսյանին, Ավետիք Հովհաննիսյանին, Նորա Օհանյանին և Հայկ Հովհաննիսյանին*** սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գառնի գյուղում գտնվող 07-021-0273-0029 կադաստրային ծածկագիր 0.1284 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հնդավոր հողատեսք հողամասին կից, իր կողմից փաստացի օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ 07-021-0273-0077 կադաստրային ծածկագրի հողատեսք՝ 0.05864 հա մակերեսով, օտարել նրան ուղղակի վաճառքի ձևով, կադաստրային արժեքով՝ /4000/ ՀՀ դրամ հողամասի ընդլայնման նպատակով:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ-8	Ձեռնպահ-0	Դեմ-0
1	ԱԼՈՅԱՆ ԱԼԻԿ			
2	ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ			
3	ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ			
4	ԱՂԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ			

5	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ			
6	ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ			
7	ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ			
8	ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«29» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 135-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Հենրիկ Սարգսյանի դիմում խնդրանքը, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացիներ ***Հենրիկ Մարտինի Սարգսյանին*** սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Հացավան գյուղում գտնվող 07-041-0106-0022 կադաստրային ծածկագիր 0.94397 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք հողամասին կից, իր կողմից փաստացի օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող 07-041-0106-0030 կադաստրային ծածկագրի հողատեսք՝ 0.22197 հա մակերեսով, օտարել նրան ուղղակի վաճառքի ձևով, կադաստրային արժեքով՝ /87000/ ՀՀ դրամ հողամասի ընդլայնման նպատակով:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ-8	Ձեռնպահ-0	Դեմ-0
1	ԱԼՈՅԱՆ ԱԼԻԿ			
2	ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ			
3	ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ			
4	ՂԱԱՋԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ			

5	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ			
6	ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ			
7	ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ			
8	ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«29» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 136-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Կարինե Սարգսյանի դիմում խնդրանքը, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ քաղաքացիներ ***Կարինե Մաքսիմի Սարգսյանին*** սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Հացավան գյուղում գտնվող 07-041-0106-0027 կադաստրային ծածկագիր 1.09788 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ, վարելահող հողատեսք հողամասին կից, իր կողմից փաստացի օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող 07-041-0106-0044 կադաստրային ծածկագրի հողատեսք՝ 0.50867 հա մակերեսով, օտարել նրան ուղղակի վաճառքի ձևով, կադաստրային արժեքով՝ /198400/ ՀՀ դրամ հողամասի ընդլայնման նպատակով:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ-8	Ձեռնպահ-0	Դեմ-0
1	ԱԼՈՅԱՆ ԱԼԻԿ			
2	ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ			
3	ԽԱՉԱՏՐՅԱՆ ՆԱԻՐԱ			
4	ՂԱԶԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ			

5	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԺՈՐԱ			
6	ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՍԵՆ			
7	ՄՈՎՍԻՍՅԱՆ ՏԻՐԱՆ			
8	ՊՈՂՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության, Կոտայքի մարզի, Գառնի համայնք,
գ. Գառնի, Ս. Շահումյան 4, էլ. հասցե՝ garnihamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«29» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 137-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912 որոշմամբ հաստատված կարգի 33 կետի <<զ>> ենթակետով, 33.1 կետի <<բ>> ենթակետով 33.2 կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը և կառույցներն իրականացրած անձի դիմումը, ***Գառնի համայնքի ավագանին որոշում է՝***

